

ԱՆՑՅԱԼ ԴԵՐԲԱՅԻ ՈՃԱԿԱՆ-ՇԱՐԱՀՅՈՒՄԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓԱԿԱՏՈՍ ԲՈՒԶԱՆԴԻ
«ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿՈՒՄ

Խոսքի կառուցման կենտրոնում գտնվում է բայ -ստորոգյալը, ուստի կարևոր է նրա ձևաբանաշարահյուսական և ոճական հնարավորությունների բացահայտումը: Հին հայերենի բայի եղանակաժամանակային հարացուցում ուրույն տեղ է գրավում անցյալ դերբայը, որն էլ շարահյուսական մակարդակում հանդես է գալիս երկու գործառնությով՝

1. Քանի որ անցյալ դերբայը են, լինիմ օժանդակ բայերի համապատասխան ձևերով կազմում է բաղադրյալ ժամանակներ ներկա, անցյալ, ապագան, հետևաբար նախադասության մեջ կիրառվում է իբրև պարզ ստորոգյալ:

2. Անցյալ դերբայը անկախ գործառնությ ունեցող դերբայ է, ուստի ձևավորում է դերբայական դարձված կատարելով շարահյուսական տարբեր պաշտոններ: Անկախաբար գործածվելիս անցյալ դերբայը կիրառվում է նաև դիմավոր բայի իմաստով:

Բուզանդի երկում անցյալ դերբայի 1691 կիրառություններից 1192-ը անկախաբար է գործածվել, իսկ 499-ը իբրև դիմավոր բայ: Անցյալ դերբայի ոճական կիրառությունները դրսևորվում են և՛ անկախաբար, և՛ դիմավոր ձևերով գործածվելիս: Սակայն, հաշվի առնելով այն իրողությունը, որ անցյալ դերբայը հանդես է գալիս սահմանական և ստորադասական եղանակների բաղադրյալ ժամանակաձևերի կազմության մեջ, հետևաբար այն իբրև դիմավոր ժամանակաձև, քերականական երկրորդական իմաստներ չի ստանում, ասել է թե ձևաբանական ոճաբանության մեջ յուրահատուկ առանձնահատկություններ չի դրսևորում: Սակայն դիմավոր բայաձևերը ոճական կիրառություն են ձեռք բերում խոսքում արտահայտելով նաև տարբեր իմաստներ: «Բայի եղանակային ձևերի եղանակաժամանակային կիրառությունները ոճական կիրառություններ են, վերաբերում են ոճաբանությանը և այդ պատճառով էլ դիտվում են իբրև ոճական երևույթ»¹: Այսինքն անցյալ դերբայն իբրև դիմավոր բայ գործածվելիս ոճական առանձնահատկությունները դրսևորում է իր բազ-

¹ Պ. Ս. Պողոսյան, Բայի եղանակային ձևերի ոճական կիրառությունները արդի հայերենում, Երևան, 1956, էջ 3:

մաքովանդակությամբ, ինչպես նաև շարահյուսական ոճաբանության մեջ համապատասխան ձևի լեզվական միավորի և գործածության անհրաժեշտությամբ: Վերորերյալ նկատառումները փորձենք պարզաբանել բնագրային օրինակների վրա, ինչպես «Եթե տեղւոյն ինչ կարի այդչափ ցանկացեալ ես, ես ինքն ինձէն զնա արդարութեամբ շինեցից, և շէն կալայց առաջի քո» (էջ 174)¹: (Եթե դու այդ տեղին շատ ես փափագում, ես ինքս կշինեմ արդարությամբ և շեն կպահեմ քեզ համար): Վերոհիշյալ բարդ նախադասության գլխավոր նախադասությունների ստորոգյալները «շինեցից», «կալայց», ստորոգյասական եղանակի բայածներ են և արտահայտում են պայմանական եղանակի իմաստ, «ցանկացեալ ես» կառույցը բարգմանվում է անկատար ներկա ժամանակով «փափագում ես» արտահայտելով հաստատական վերաբերմունք: Իզուր չէ, որ արդի քերականները ենթադրական եղանակին վերագրում են սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատարի իմաստ: Սնծնական դերանվամբ արտահայտված ենթական «Ես ինքս ինձէն», գործածված է սաստկական նշանակությամբ: Այսպիսով «Եթե»-ով սկսվող պայմանական երկրորդական նախադասություններում անցյալ դերբայը հիմնականում արտահայտում է հաստատական իմաստ թարգմանվելով անկատար ներկա կամ անկատար անցյալ ժամանակներով: Ահա մեկ այլ օրինակ ևս. «Տեսե՛ք, եղբա՛րք, զի ահաւասիկ իբրև հայր յորդիս մատուցեալ է առ մեզ Աստուած խրատել զմեզ, զի զմեզ պիտանիս արասցէ, և զանուն քաջութեան ժառանգեցուցէ մեզ, և զմեզ մեծաց վարձուց արժանիս արասցէ» (էջ 148): (Տեսնու՛մ եք, եղբայրներ, որ Աստված մեզ հետ վարվում է ինչպես որդիների հետ մեզ խրատելու համար, որպեսզի մեզ պիտանի մարդիկ դարձնի, քաջության անուն ժառանգել տա և մեծամեծ վարձերի արժանացնի): Այս նախադասությունը դիմում-հարցադրում է, որտեղ անցյալ դերբայը արտահայտում է ընդհանրական ներկայի իմաստ (առհասարակ Աստված վարվում է խրատելու համար) և գտնվելով ստորադասական եղանակի բայածների տիրույթում թարգմանվում է անկատար ներկա ժամանակով: Պետք է շեշտել մի կարևոր հանգամանք, անցյալ դերբայը անկատար ներկա և անկատար անցյալ ժամանակի իմաստ է արտահայտում այն դեպքում, երբ տվյալ կառույցում կա ապառնիության իմաստ թելադրող ստորադասական եղանակով դրված բայածն, ինչպես «Քանզի ոչ երկրաւոր զաւակի ցանկացեալ ես, այլ այնպիսումն որ ի սպասաւորութիւն սպասու պաշտաման ծառայութեան Տեառն Աստուծոյ կացցեն » (էջ 22): (Որովհետև նա ցանկանում էր ոչ թե

¹ Փաստոսի Բուզանդացույ Պատմութիւն Հայոց, Երևան, 1987: Բնագրային օրինակները թերվում են ըստ սույն հրատարակության

երկրավոր զավակի, այլ այնպիսիների, որոնք տեղի Աստծուն ստասավորեն, նրան ծառայելու պաշտոնը կատարեն): Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ուխտագրության ստորագրող ոչ միայն լեզվական միավոր է, այլ նրա միջոցով արտահայտվում է խոսողի վերաբերմունքը գործողության նկատմամբ, հետևաբար այն ստեղծում է յուրահատուկ անհատական ոճ³:

Բուզանդի երկի լեզուն համարում են ժողովրդախոսակցական: Նրա լեզվին բնորոշ են «ժողովրդական պարզությունը, հասարակախոսությունը, հաճելի երկխոսությունները»⁴: Այդ պատճառով Բուզանդի երկում, մասնավորապես բարդ նախադասություններում, մանրակաղապարները օրինաչափորեն չեն գործածվել: Բուզանդի երկին բնորոշ է բազմաբովանդակությունը. անցյալ դերբայը մերթ ստորադասական բայածների միջակայքում է, մերթ սահմանականի արտահայտելով գործողության նկատմամբ հաստատական վերաբերմունք, որն էլ փոխանցվում է ստորադասական եղանակի բայածներին, ինչպես «Զի եթ եր ումեր ինչ պարտիցի, եթ որ ուրուր ուստեր ինչ վնասեալ իցէ, կամ որ ումեր ինչ դատ պարտիցի, ամենեքեան եկեսցեն ի դաստակերտն շինեսցին» (էջ 168): «Զի գրեալ էր կայսրն զսրբոյն Ներսիստ առ թագաւորն Հայոց Արշակ, թէ նա սպան գորդին իւր գմիածօր, վասն այսորիկ արգելաւ աստէն» (էջ 164):

Անցյալ դերբայի շարահյուսական կիրառությունների ժամանակ որպես ոճական արտահայտչամիջոց ակտիվորեն գործածվել է զեղչումը: Այն հաճախ է կիրառվում անցյալ դերբայով ու համապատասխան օժանդակ բայերով կազմված բազմակի ստորագրայների դեպքում, օրինակ «Եւ մեր հանապազ վաստակեալ և աշխատեալ ենք» (էջ 366): «Կեցեալ և մեռեալ ենք ի վերայ ձեր» (էջ 336): «Եւ ելեալ է եկեալ ոտիւք իւրովք» (էջ 256): «Որք երթեալ հասեալ էին յաշխարհն Յունաց» (էջ 86): «Իսկ զգօրքն Յունաց հասեալք, մածեալք, բանակեալք էին իբրև զաւագ առ ափն ծովու բազմութեանք» (էջ 204): Ինչպես տեսնում ենք, «անցյալ դերբայ+օժանդակ բայ» կաղապարում օժանդակ բայը չնայած ոչ բոլոր ստորագրայների մոտ է պահպանվում, սակայն նրա առկայությունն անգամ մեկի մոտ բավարար է ողջ նախադասության իմաստն ըմբռնելու և մյուս դերբայների մոտ զեղչված օժանդակ բայը վերականգնելու համար: Հասկանալի է, որ նման կառույցներում անցյալ դերբայը հանդես է գալիս ոչ թե որպես ինքնուրույն, անկախ դերբայ, այլ «անցյալ դերբայ+օժանդակ բայ» կաղապարով: Այսպիսով անցյալ դերբայը ոճական տիրույթում իր կախյալ գործառույթով առանձնանում է բազմաբովանդակությամբ, շարահյուսական և առանձն-

³ Հմմտ Ա. Արախանյան, Հայոց լեզու, Շարահյուսություն, Երևան, 2004, էջ 18:

⁴ Վ. Առաքելյան, Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության, Երևան, 1981, էջ 164:

նահատկություններով, գեղչումով: Նշենք, որ անցյալ դերբայը պահանջում է և ուղղականով դրված ենթակա, և սեռականով դրված ենթակա «Իբրև կատարելին անդ զխորհուրդս գոհութեան պատարագին ի վկայանոցի անդ յայնմիկ գոր էր շինեալ սրբոյն Եպիփանու» (էջ 340): (...որ շինել էր սուրբ Եպիփանը): «Դորա անթիւ ճակատ մտեալ էր» (էջ 362): (Սա անթիվ անգամ կոիվների մեջ էր մտել): «Զի եթէ մեք լեալ էաք» (էջ 206): (Որովհետև եթէ մենք լինեինք) :

Վ. Առաքելյանը, վերլուծելով Փ. Բուզանդի երկի լեզուն, նկատում է, որ նրա անհատական ոճը ցայտուն կերպով արտահայտվում է շարահյուսության մեջ: Այն էլ «խոսքը շարահյուսորեն հավասար մակարդակով չի ընթանում»: Նրան բնորոշ են կրկնությունները, անկանոն համաձայնությունները, շարահասական շրջումները: Մերթ գործածվում են բազմաբարդ նախադասություններ, մերթ կտրուկ հատուկ և սեղմ պարզ նախադասություններ:

Գրաբարում անցյալ դերբայը հաճախ հանդես է գալիս առանց օժանդակ բայի դիմավոր բայի նշանակությամբ, որն էլ խոսում է գրաբարյան անցյալ դերբայի դիմավոր բայիմաստ արտահայտելու ուշագրավ ունակության մասին: Այս կառույցը յուրահատուկ միջանկյալ օղակ է անցյալ դերբայի կախյալ և անկախ կիրառությունների տիրույթում: Անդեմ նախադասության գլխավոր անդամն իր մեջ այնքան հստակ դիմավոր բայի իմաստ ունի, որ ընկալվում է իբրև դիմավոր բայ: Այս կարծիքն է հայտնել նաև Արսեն Բագրատունին նշելով. «Անցյալ դերբայն ինքնին միայնակ վարի յաճախ փոխանակ դիմաւոր բայի» :

Ստորև դիտարկենք անցյալ դերբայի դիմավոր բայի գործառնությով բնագրային օրինակներ, ինչպես «Եւ ապա իբրև զիտացեալ թագաւորն Դայոց Արշակ» (էջ 226): (Երբ հայոց Արշակ թագավորն այս իմացավ): «Արդ ի նեղ ուրեմն անգեալ թագաւորն Յունաց» (էջ 212): (Այսպես ուրեմն հունաց թագավորը նեղն է ընկնում): «Եւ պատուհասեալ զնոսա որպէս զմահապարտս» (էջ 254): (Երբ ես նրանց նախատում էի): «Կամ թէ զիա՛րդ Արշակ արքայ աւետարանաւն երդուեալ արքային Պարսից» (էջ 194): (Կամ թէ ինչպես Արշակ թագավորը պարսից թագավորին երդում տվեց ավետարանի վրա): «Իսկ նա յորժամ հասեալ առ Վարագն» (էջ 78): (Իսկ նա երբ Վարագի մոտ հասավ) :

Կարող ենք ասել, որ վերոբերյալ կառույցները ոչ թե նախադասության օժանդակ միավորներ են, այլ նախադասություններ, որովհետև հիշյալ կառույցներին բնորոշ է անկախ գործածությունը: Ուրեմն անկախ դերբայական

⁵ Դմմտ. Վ. Առաքելյան, նշված աշխատություն, էջ 169-170:

⁶ Ա. Բագրատունի, Դայերեն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852, էջ 119:

կապակցությունները՝ նախադասության արժեք ունեն, որտեղ ենթակայի առկայությունն անհրաժեշտ է: Չնայած այն բանին, որ այստեղ առկա չեն համապատասխան դիմային վերջավորությունները, որոնցով իրականացվում են համաձայնության երևույթները, սակայն դերբայի չափազանց անկախ գործածության փաստը վկայում է, որ անցյալ դերբայն ունի դիմավոր բայի նշանակություն: Այսինքն վերոբերյալ օրինակներում **գիտացեալ, անգեալ, պատուհասեալ, երդուեալ, հասեալ** ձևերը ունեն դիմավոր բայի իմաստ: Այս երևույթը չպետք է փոխակերպություն համարենք, այլ լեզվական միավորների բնականոն, ազատ գործածություն, լեզվի ներքին օրինաչափության դրսևորում: Սրանք այս կամ այն հեղինակի ոճի, ինչպես նաև լեզվի տվյալ շրջանի ոճական առանձնահատկությունների դրսևորումներն են: Գրաբարի հմուտ հեռագուտող Գ. Կուսիկյանը գրում է. «Կարևոր իրողություն է դերբայների կիրառությունը դիմավոր ձևերի փոխարեն: Այս իրողության մեջ արդեն իսկ դիտվում են հետագա բաղադրյալ ձևերի սաղմերը, որոնք միջին հայերենում և աշխարհաբարում վերակազմավորվել են որպես վերլուծական ձևեր՝ դրանով իսկ նոր որակ մուծելով շարահյուսության մեջ: Գենց միայն դերբայի կիրառությունը առանց օժանդակ բայի, ասել է թե՛ բայի գործառույթը առանց ենթակայի հետ համաձայնեցում...»⁷: Այսպիսով վերոհիշյալ օրինակներից պարզորոշ երևում է, որ «անցյալ դերբայ+ենթակա» կառույցները լիիմաստ երկկազմ նախադասությունների ոճական իմաստ են ստանում նախադասության մեջ կատարելով դիմավոր բայի դեր, իսկ անցյալ դերբայով արտահայտված ստորոգյալի ենթական կարող է դրվել ինչպես ուղղական, այնպես էլ սեռական հոլովով: Որպես առանձնահատկություն նշենք, որ դերբայական նախադասության մեջ բացառվում է ենթակայի և ստորոգյալի համաձայնությունը: Անկախ նրանից, թե ենթական որ հոլովով է դրված կամ որ թվով, քանի որ ստորոգյալը արտահայտված է անցյալ դերբայով, ապա համաձայնություն չի կարող լինել դերբայի դեմք և թիվ չունենալու պատճառով:

Ոճական կիրառությունների շարքը համալրելու համար ուշադրության է արժանի ևս մի կառույց, որտեղ անցյալ դերբայը արտահայտում է դիմավոր բայի իմաստ. խոսքը այն համադասական նախադասությունների մասին է, որի բաղադրիչ նախադասությունները միմյանց են կապակցված միավորական և

⁷ Տե՛ս է. Մկրտչյան, *Ենթակայի և ստորոգյալի համաձայնությունը գրաբարում* (V դար), Բանբեր երևանի համալսարանի, 1998, ք. 2, էջ 157-166:

⁸ И. К. Кусикян, Очерки исторического синтаксиса литературного армянского языка. М., 1959, с. 3:

շաղկապով, սակայն նրանք ունեն քերականորեն տարբեր ստորոգյալներ, այսինքն մեկն արտահայտված է դիմավոր բայով, մյուսը անցյալ դերբայով⁹, ինչպես «Արդ ծեր թողեալ զԱստուած, և յիշեցուցեք զչարիսն ծեր գառաջինս, և լցեք զչափ մեղացն հարցն ծերոց» (էջ 64): (Թողիք Աստծուն և կրկնեցիք...), «Եւ յարուցեալ ի գահոյիցն, բուռն հարկաներ զՄուշեղի, և ասէ» (էջ 304): (Գահույքից վեր կացավ, բռնեց Մուշեղին, փաթաթվեց ... և լաց եղավ): Առաջին հայացքից կարող է թվալ, որ և համադասական շաղկապով միացել են դիմավոր և անդեն բայական ձևերը, որոնք անհամազոր քերականական կառույցներ են: Սակայն մեզ հայտնի է անցյալ դերբայի դիմավոր բայի գործառույթ իրականացնելու հատկությունը, հետևաբար և համադասական շաղկապի միջոցով կապակցվել են երկու հավասարազոր, համադաս նախադասություններ:

Անցյալ դերբայը նախադասության մեջ կարող է գործածվել «անցյալ դերբայ+դիմավոր բայ» կաղապարով, ինչպես «Եւ առեալ ածին փութապէս» (էջ 158), (Գնացին իսկույն բերին): «Սոյնպէս և զԳարջոյն Մաղխաղ ծին տարեալ սատակեաց» (էջ 388), (Փախցրեց ու սպանեց): «Թագուցեալ ապրեցուցանէր սպարապետն զօրավարն Զայոց Վասակ» (էջ 202), (Զայոց Վասակ սպարապետը փախցնում ու փոկում է): Սակայն նշված կառույցում դժվար է լինում տարբերակել անցյալ դերբայի անկախ կիրառության և դիմավոր բայից կախված լինելու սահմանները: Ա. Այտընյանի կարծիքով տարբերակման համար էականն այն է, թե ենթական որ հոլովով է դրված: Սեռականով ենթական անցյալ դերբային անկախ դիրք է տալիս, իսկ եթե ենթական դրված է ուղղական հոլովով, ապա նշանակում է, որ այն ոչ թե անցյալ դերբայի ենթական է, այլ տվյալ նախադասության մեջ գործածված դիմավոր ստորոգյալի ենթական: Ըստ Այտընյանի հիշյալ ձևերը զուգադրական բայեր են և ունեն մեկ բառային արժեք: Պետք է հաշվի առնենք այն հանգամանքը, որ ենթական սեռական հոլովով է դրվում ներգործական սեռի անցյալ դերբայի հետ, մինչդեռ կրավորական սեռով արտահայտված անցյալ դերբայի հետ ենթական երբեք սեռական հոլովով չի կարող գործածվել, իսկ չեզոք սեռի անցյալ դերբայի հետ ենթական հաճախ է դրվում ուղղական հոլովով, օրինակ «Զի գնացեալ (չեզոք սեռ) երթիցէ նա» (էջ 318): «Եւ ինքն երթեալ (չեզոք սեռ) հասանէր ի կողմանս Տարոն գաւառի» (էջ 118): «Եւ պնդեալ (ներգ. սեռ) յամառէին ամենայն բազմութիւնքն» (էջ 138): «Զի այսպէս մեծապէս ճգնեալ (չեզ. սեռ) խորհեցան

⁹ Տե՛ս Թ. Շահվերդյան, Դասական գրաբարի շարահյուսական ոճաբանություն, Երևան, 2007, էջ 45:

իմաստունք» (էջ 139): «Զի այսպէս յայտնեալ(ներգ.սեռ) բարբառեցաւ նոցա» (էջ 68): «Եւ այսպէս Պապն որդին Արշակայ ի դիւացն հալածեալ(կրավ. սեռ) եհաս մինչև ի մահ իւր» (էջ 184): Ի մի բերելով վերոբերյալ քննարկումները հանգում ենք այն եզրակացության, որ անցյալ դերբայի անկախ լինելու կամ չլինելու հարցը հստակորեն կախված չէ ենթակայի ուղղական կամ սեռական հոլովով դրված լինելու հանգամանքից. նամանավանդ Բուզանդը հետևողական չէ քերականական օրինաչափությունները կիրառելիս:

Բուզանդի երկում հանդիպում ենք անցյալ դերբայի մի յուրահատուկ ոճական գործառույթի ևս, երբ անցյալ դերբայը և նրան հաջորդող դիմավոր բայն ունեն իմաստային առնչություններ, այսինքն հոմանիշներ են կամ նույնանիշներ: Օրինակներ «Զի զամենայն տապալէին քսկեալ քանդէին» (էջ 266): «Եւ սուրբ տեղեօքն քամահեալ արհամարիէր» (էջ 180): «Զայնու ժամանակաւ ապստամբեաց յարքայէն Դայոց մի ի ծառայից նորա մեծ իշխանն Աղծնեաց, որ անուանեալ կոչէր բղեաշխն» (էջ 36)¹⁰: Անցյալ դերբայի նման կիրառությունները Ա. Սյտրնյանը համարում է հին հայերենի «պերճութեանց մաս» գտնելով, որ երկու ձևերը միմյանց համարժեք են. «Հաւասարապէս կըրնայ ըսուիլ անց գնաց և անցեալ գնաց,- եկին հասին և եկեալ հասին,- խաղայր գնայր և խաղացեալ գնայր»¹¹: Ըստ լեզվաբանի այս կառույցները պետք է արդի հայերեն թարգմանել դիմավոր բայածնեով: Այս առումով Ա. Սերահամյանը ևս նշում է. «...նախադասության պարզ ստորոգյալի վրա հաճախ դրվում է հոմանիշ բայի անցյալ դերբայը բայ-ստորոգյալի բայական իմաստն ուժեղացնելու, սաստկացնելու և միտքն ավելի արտահայտիչ դարձնելու համար»¹²: Ոճական արտահայտչամիջոցներից հետաքրքրություն են ներկայացնում անցյալ դերբայով արտահայտված հոմանշային կրկնությունների կիրառության դեպքերը Բուզանդի երկում: Նկարագրվող տեսարանն ավելի գունեղ, ամբողջական և արտահայտիչ դարձնելու համար երբեմն հաջորդաբար գործածվում են իմաստով իրար մոտ բառեր, ինչպես «Իսկ իբրև ետես զայս եղբայրն թերահաւատ կրօնաւոր, զարհուրեալ դողացեալ խռովեալ տագնապեալ յերկիր կործանեալ կայր, ի բերանս հարեալ, պարտեալ թալացեալ ոգին սպառեալ յինքնէ» (էջ 344): «Այլ իշխանն Պարսից զքնամութիւն, զոր ունէր ի ներքոյ, խորամանգեալ ծածկեալ մեքենայեալ առագաստեալ բերի

¹⁰ Նույնանիշները, հոմանիշները ստուգված են ըստ Ռ. Ղազարյանի «Գրաբարի հոմանիշների բառարանի» Եր., 2006:

¹¹ Վ. Զալըխեան, Ա Սյտրնեան, Քերականութիւն հայկազեան լեզուի, Վիեննա, 1885, էջ 433:

¹² Ա. Սերահամյան, Դայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Եր., 1953, էջ 350:

և առնել սպաս զղաւն կատարել»(էջ 82): «Եւ յաւուրս ձմեռանոյն յորժամ կուտեալ դիգեալ զմեծութիւն բազմութիւն թանձրութեան ծեանցն կուտակեալ հիւսեալ ծեանցն ի վերայ ձմեռային լերանցն յայնպիսի լերանց ի վերայ ընդ այնպիսի ժամանակի կամել ուրեք երթալ ի պէտս ճանապարհի»(էջ 60):

Նշենք, որ ի տարբերություն սովորական կրկնության դեպքերի, ոճական կրկնությունները բառիմաստային որևէ փոփոխություն առաջ չեն բերում, այլ սոսկ ավելի են ընդգծում նրա իմաստը:

Բուզանդի երկուն հազվադեպ հանդիպում ենք դեպքեր, երբ միևնույն նախադասությունը կարող է ունենալ տարբեր պաշտոններ կատարող բազմակի լրացումներ արտահայտված անցյալ դերբայով, ինչպես «Եւ տեսուչ ամենեցուն որք միանգամ վասն սիրոյն Աստուծոյ յաշխարհէ **էին մեկնեալ**, ի յանապատս բնակեալ, ի քարանձաւս ամրացեալք յայրս եւ քարածերպս երկրի, եւ միայնադերծք բոկազնացք **զգաստացեալք** ընդաբուտք արմատակերք, զօրէն գազանաց ի լերինս շրջէին լեշկամաշկօք եւ մորթօք այծենեօք, նեղեալք տառապեալք եւ տարակուսեալք, յանապատի մոլորեալք» (էջ 230): Ինչպես տեսնում ենք, միևնույն բարդ նախադասության կազմում կրկնված են ստորոգյալը, ենթական: «Եւ ածել զամենայն հանդէսն կարգեալս և պատրաստեալս, վառեալս ի պատերազմ, զորօշս **փողփողեալս** և նշանս արձակեալս»(էջ 286): Իսկ այս նախադասության մեջ ունենք անցյալ դերբայով արտահայտված բազմակի որոշիչ, ձևի պարագա: Հետաքրքիր առանձնահատկություն է դրսևորվում, երբ ստորոգյալը արտահայտված է անցյալ դերբայով, ենթական դրված է հոդով, և այստեղ կարծես հոդի գործածությունը ենթակային հաղորդել է սաստկական նշանակություն, ինչպես «Իմ այդ տեղի դուռ ես բազմեալ»(էջ 172): Հայտնի է, որ գրաբարում շատ բայեր, մանավանդ կրավորական սեռի բայերը, ենթակայական դերբայ չունեն: Այդ պատճառով էլ երբեմն անցյալ դերբայը գործածվում է ենթակայական դերբայի իմաստով: Այդ մասին Վ. Զալըխյանը գրում է. «Ընդունելութեան ներկա չունեցող բայերուն շատ անգամ անցեալը կը գործածուի անոր տեղ»¹³, ինչպես «Հրաման տայր սուրբ հայրապետն Ներսէս, **եկելոցն** (եկողներին) ճաշ պատրաստել»(էջ 180): «Եւ յուսալից սպասելոցն (հուսալով սպասողներին) գայցէ երևեալ Քրիստոս ծնունդ Աստուծոյ Հօր»(էջ 236): Նշեցինք, որ անցյալ դերբայը անկախաբար գործածվելիս հանդես է գալիս ինչպես դիմավոր բայի իմաստով, այնպես էլ լրացական դերով, այսինքն կախյալ հարաբերության մեջ ունենալով լրացումներ կազմում է դերբայական դարձվածներ: Ուստի անհրաժեշտ ենք համարում վկայել բնա-

¹³ Վ. Զալըխյան, նշված աշխատություն, էջ 420:

գրային փաստեր, դրանք դասդասել և խմբավորել ըստ նրանց դրսևորած շարահյուսական-կիրառական և ռեական մի շարք առանձնահատկությունների:

Ներկայացնում ենք Բուզանդի «Պատմութիւն Հայոց» երկում գործածված կաղապարները: Ենթակա «Եւ առն Աստուծոյ ասացեալքն հուպ ընդ հուպ վաղվադակի կատարեցաւ» (էջ 182): Որոշիչ՝ «Անցանէր առ անկելովք դիակամբքն» (էջ 370): «Եւ քաջք զհետ լինէին փախուցելոյն փախստական Տիրիթայ» (էջ 192): «Եւ կանգնէր զսեղանս կործանեալս» (էջ 116): Հատկացուցիչ՝ «Իսկ կինն սպանելոյն Փռռանծեմն զհանդերձսն պատառեալ... կոծր» (էջ 190): Բացահայտիչ՝ «Այլ մեք ապրեալքս զօրութեամբն Աստուծոյ, և հաստատեալք հաւատովքն ի յոյսն Քրիստոսի» (էջ 174): «Ի բաց կաց յինն ծառայ չարագործ տիրացեալ տերանց քոց» (էջ 142):

Գոյական անդամի լրացումների (որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ) կիրառություններից ավելի հաճախական են որոշչային կիրառությունները (91 օրինակ): Բուզանդի երկում ավելի շատ են տարածված անցյալ դերբայով կազմված բայական անդամի լրացում դերբայական դարձվածները, այսպես Ուղիղ խնդիր՝ «Այլ եպիսկոպոսապետն Հայոց Ներսես շինէր զամենայն աւերեալսն երկրին Հայոց» (էջ 326): «Եւ զամենայն կործանեալսն կանգնէր» (ն. տ.): Հանգման անուղղակի խնդիր՝ «Եւ մնացելոցն յանցելոցն զուք եւ խնամ կալցին» (էջ 46): «Իսկ թագաւորն ծաղր առնէր զբանսն կաթողիկոսին, և մկթայր զնորա զասացելովքն» (էջ 174): Չկի պարագա՝ «Եւ անդ ապրեցաւ թագուցեալ ի տան նորա» (էջ 36): «Եւ ղակիչ ածեալ յամուր տեղուք միոք, կամէր կռուել ընդ թագաւորին Հայոց ընդ Արշակայ» (էջ 244): «Եւ նոքա յարուցեալք զոհացեալ յաղօթս կատարելոյ մատեան արկին ի խորովս» (էջ 146): Հիմունքի պարագա՝ «Յաղագս թէ որպէս ի բանս չարախորհուրդս եւ անմիտ մարդկան ելեալ թագաւորն Հայոց Վարագդատ, զօրավարն Հայոց սպանանէր» (էջ 358): «Ըստ չարեացն կատարելոց զՓռռանծեմայն ամենայն չարեօք լցեալ զկանս կատարէր» (էջ 194): Ժամանակի պարագա՝ «Տուեալք միմեանց ողջոյն, արկեալք զհուրաքանչիւր զաթոռսն, նստին կարգաւ» (էջ 160): Պատմադի պարագա՝ «Քանզի ի տախտակացն խորտակելոցն յայտնի երևէր բերելեացն թաղօնութիւն» (էջ 38): «Զոր իբրև լուաւ Տիրիթ, զահի հարեալ յարքայէն՝ զիշերի փախստական լինէր» (էջ 192): Նպատակի պարագա՝ «Եւ ի մահուն իւրեանց զմիամտութեան հաստատութեան զանծինս փոխանակ տալով ընդ ճշմարտութեան տեառն, մատուցին ի վերայ եկեղեցեաց... ի վերայ անթիւ նոր ի Քրիստոս մկրտելոցն» (էջ 44):

Վիճակի իմաստով՝ «Եւ թագաւորն Վարագդատ առնոյր զգօրն իւրոյ բանակին, և զնայր հասանէր ի տեղի ճակատուն, վառեալ կազմեալ պատրաս-

տեալ ի պատերազմ» (էջ 368): «Ամենեքեան ի դժնէ տրտմութենէն զուարթացեալք յուրախութիւն դառնային» (էջ 172):

Վերոհիշյալ կառույցները վկայում են այն մասին, որ թեպետ Բուզանդի երկի լեզուն համարվում է ժողովրդախոսակցական, սակայն Բուզանդը, գործածելով տարբեր շարահյուսական պաշտոններով դերբայական դարձվածներ, փորձել է հարազատ մնալ ժամանակի գեղարվեստական ոգուն ստեղծելով գեղեցիկ, միաժամանակ պարզ, անմիջական միջավայր:

Հետաքրքիր ոճական առանձնահատկություններ են ստեղծում Բուզանդի գործածած դարձվածքները, որոնք բավականաչափ շատ են երկում և կյանքի են կոչվել ոճական նկատառումներով. այսինքն այս կամ այն իմաստային նրբերանգներ արտահայտելու համար: Սրանց մի մասը, ինչպես նշում է Վ. Առաքելյանը, եկել է «այն ժամանակվա բարբառներից ու խոսվածքներից և իրենց վրա է կրում զավառական խոսքի հատկանիշները»¹⁴:

Ներկայացնում ենք Բուզանդի երկում հանդիպած անցյալ դերբայով կազմված դարձվածքների որոշ օրինակներ¹⁵:

«Ի մեծ և գեղեցիկ հրապարակին գերթնէկս առեալ շրջեր. զճեմս առեա» (էջ 180), «Եւ ոչ իօրն իւրեանց չափոց ինչ նմանեցին միտ եղեալ» (էջ 58), «Յարտասուս հարեալ, ասաց» (էջ 242), «Իսկ Շապուհ արքայն առեալ զճեռանէ նորա, շրջեր ճենելով. ի չքմեղս առեալ զնա ածեր ի հայակողմն ի հողն հարեալ յատակն» (էջ 25), «Ի կիրթ ձգեալ հասանէր զօրացն Պարսից» (էջ 218), «Ոչ զանց արարեալ թողաք վասն պատշաճ իրացն կարգին» (էջ 12), «Խորհուրդ եղեալ ընդ միմեանս սպանանել զքահանայապետն Աստուծոյ զՎրբանէս» (էջ 16), «Առաւել ևս փութայր, զուն եղեալ յորդորելով զամենեսեան առ ի բարեացն քաջալերութիւն» (էջ 24), «Եւ մեծաւ խնդութեամբ յոտն կացեալ, բազում զոհութեամբ երկիր պագանէր տեառն» (էջ 38), «Եւ զտան հեծելագօր սպառազէնք կուռ վառեալք նիգակաւորք համակ վաթսուն բիւր» (էջ 214), «Եւ հրծիգ արարեալ, քակէին զհիմունս նորա» (էջ 266), «Ապա իբրև ոչ մի ոք յանձն առնուին ուրանալ ի քրիստոնէութենէն» (էջ 274):

Սրանք էլ կազմում են Փ. Բուզանդի ժողովրդական խոսքը արտահայտող գեղեցիկ, զարդարուն շերտը, որն էլ խոսքին հաղորդում է անմիջականություն:

Վերոհիշյալից կարելի է անել հետևյալ ընդհանուր եզրակացությունները:

¹⁴ Վ. Առաքելյան, նշված աշխատություն, էջ 164:

¹⁵ Ստորև ներկայացվող դարձվածքները ստուգված են ըստ Ռ. Ղազարյանի «Գրաբարի դարձուածարանական բառարանի», Երևան, 2012:

1. Անցյալ դերբայի շարահյուսական կիրառությունների ժամանակ ոճական արտահայտչամիջոցներից ակտիվորեն գործածվում է գեղչումը, որը բնորոշ է խոսքային իրադրությանը: 2. Անցյալ դերբայը բուզանդի երկում գործածվում է իբրև կրկնություն, հոմանիշ, նույնանիշ բայերի հետ խոսքին հաղորդելով սաստկական իմաստ: 3. Անկախաբար գործածվելիս նախադասության մեջ կատարում է տարբեր շարահյուսական պաշտոններ դառնալով որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ, խնդիր, պարագա տարբեր շարահասությանը, որոնք ստեղծում են գեղեցիկ գեղարվեստական, միաժամանակ պարզ առօրեական միջավայր: 4. Անցյալ դերբայի դիմավոր բայածները արտահայտում են այնպիսի գործողություն, որի նկատմամբ խոսողն ունի հավաստի վերաբերմունք, ստորադասական բայածների միջակայքում արտահայտում է պայման, երբեմն հարց-դիմումներում ընդհանրական ներկայի իմաստ «Տեսէ՞ք, եղբա՛րք, զի ահաւասիկ իբրև հայր զորդիս մատուցեալ է առ մեզ Աստուած խրատել զմեզ...»: 5. Ոճական առանձնահատկությունները ի հայտ են գալիս հատկապես դարձվածքների կիրառությունների մեջ, որոնցից շատերն ինքնուրույն ոճեր են գրաբարում: 6. Անցյալ դերբայի ոճական առանձնահատկությունները դրսևորվում են շարահյուսական ոճաբանության տիրույթում թե՛ դիմավոր ձևերով գործածվելիս, թե՛ անդեն նախադասության մեջ կիրառվելիս: Բարդ նախադասություններում մանրակաղապարները օրինաչափորեն չեն գործածվել, հանդիպում ենք «եթէ»-ով, «քանզի»-ով, «յորժամով»-ով, «զի»-ով և այլ կառույցներ, որոնցում անցյալ դերբայը կիրառվում է մերթ ստորադասական բայածների միջակայքում, մերթ սահմանական եղանակի բայածների արտահայտելով տարբեր իմաստներ: Նշված իրողությունը պայմանավորված է խոսքային իրադրությամբ և սովորաբար բնորոշ է խոսակցական, իրավիճակային, հանպատրաստից խոսքին:

The verb-predicate is in the center of speech, thus it is essential to reveal its morphological-syntactic and stylistic capabilities. Stylistic usage of the Past Participle is demonstrated when implemented both independently and as a declined form. Of specific interest are the cases of synonymic repetitions, reduction, question-address expressed through the Past Participle; the usage of the Past Participle in idioms, most of which represent individual styles in the Grabar. All this proves the linguistic peculiarities of P. Buzand's work, each of which is an expression of the beautiful, ornate national speech.